Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն 06

N << ՀՀ ՏՄ-ԳՀԾՁԲ-19/14>> ԾԱԾԿԱԳՐՈՎ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Իջևան << 05 >> ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թ.

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝ ներքին աուդիտի բաժնի վարիչի ժ/պ Ա. Ոսկանյան

Անդամներ՝

ՀՀ Տավուշի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առաջատար մասնագետ Վ. Խառատյան

ՀՀ Տավուշի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության առաջատար մասնագետ Հ. Խաչատուրյան

ՀՀ Տավուշի մարզպետարանի քարտուղարության վարչատնտեսական բաժնի վարիչ Դ. Փաշինյան

Հանձնաժողովի քարտուղար՝ ՀՀ Տավուշի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի վարիչ՝ Ա.Խաչատրյան

1. Տեղեկություններ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կատարված հարցման և որակավորման փաստաթղթերի վերաբերյալ

1. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի դրական եզրակացության համաձայն՝ Ասատրյանս ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ և <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող տվյալները համապատասխանում են իրականությանը:
2. Ասատրյանս ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես հրավերի 1-ին մասի 2.5 կետի 4-րդ ենթակետով սահմանված է.

   2.1 *4) <<Աշխատանքային ռեսուրսներ>> որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝*

ա. պայմանագրի կատարման համար պահանջվում են հետևյալ որակավորումն ունեցող աշխատանքային ռեսուրսները

Մասնագետների			
քանակ	***որակավորումը***	***աշխատանքային փորձը***	
		ժամանակահատվածը	***գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը***
նվազագույնը 3 ներքին	*հանրային հատվածի*	*առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ*	*աուդիտորի մասնագիտական գործունեություն*

աուդիտոր	*ներքին աուդիտորի որակավորում*		

բ. մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին.

գ. եթե մասնակիցը ճանաչվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից, ապա վերջինս սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին է ներկայացնում առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր, ինքնակենսագրություն (CV)), ***աշխատանքային պայմանագրերի և նմանատիպ աշխատանքների կատարումը հավաստող այլ փաստաթղթերի պատճեններ,*** *ինչպես նաև համապատասխան գործատուի մոտ կատարած աշխատանքները հավաստող գործատու(ներ)ի ղեկավարի կողմից ստորագրված երաշխավոր(ներ)ի նամակ(ներ) և ստորագրված գրավոր հայտարարություն՝ «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված սահմանափակումների բացակության մասին:*

Վերը նշված մգեցված մասով մասնակիցը ներկայացրել է ներգրավված մասնագետների աշխատանքային պայմանագրերի պատճեներ, ըստ որոնց միայն մեկ ներգրավված մասնագետ՝ Ալբերտ Ասատրյանն ունի հրավերով պահանջվող երեք տարվա աշխատանքային ստաժ, մյուս երկու մասնագետներ՝ Արամայիս Կարապետյանի և Արաքսյա Ադամյանի աշխատանքային պայմանագրերից պարզ է դառնում, որ նրանց աշխատանքային ստաժը չի համապատասխանում հրավերով սահմանված երեք տարվա ստաժին:

2.2 Ինչպես նաև բացակայում է գործատուի ղեկավարի կողմից տվյալ ծածկագրի շրջանակներում էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված երաշխավորի նամակները:

2. << *ՀՀ ՏՄ-ԳՀԾՁԲ-19/14*>> ծածկագրով **«Ներքին աուդիտի ծառայությունների »** ձեռքբերման ծածկագրով մրցույթի գնահատման հանձնաժողովը որոշեց.

1. ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 47-րդ կետի համաձայն մասնակցին տրամադրել երեք աշխատանքային օր արձանագրված անհամապատասխանությունները շտկելու համար. մասնավորապես.

   ա) Կամ մասնակիցը ներկայացնի Արամայիս Կարապետյանի և Արաքսյա Ադամյանի, որպես մարզպետարանի 2020 թվականի ներքին աուդիտի ծառայությունների մատուցման մեջ ներգրավված մասնագետների հրավերով սահմանված երեք տարվա աշխատանքային ստաժը հիմնավորող փաստաթղթերի պատճենները (այնպիսիք, որոնք ունենան իրավական ուժ),

կամ ներկայացնի այլ աշխատանքային ռեսուրսների տվյալներ և հրավերով սահմանված փաստաթղթեր:
բ) Բացի վերը նշված շտկումից, ներկայացնի նաև հրավերով սահմանված երաշխավորի նամակները:

2. Մասնակցի կողմից վերը թվարկած անճշտությունների շտկման դեպքում կկիրառվի ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետը, չշտկելու դեպքում՝ 48-ի 2-րդ և 45-րդ կետերը:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները.

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Ոսկանյան

Հանձնաժողովի անդամներ՝ Վ. Խառատյան

Հ. Խաչատուրյան

Դ. Փաշինյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Խաչատրյան